

## Միջազգային աշխատաժողով

Հոկտեմբերի 13-ին ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի, Հայաստանի Հանրապետության Գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ ՀՊՄՀ-ում կանցկացնի «Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» խորագրով միջազգային աշխատաժողով:

Աշխատաժողովը կազդարարի Հատուկ կրթության ֆակուլտետի և Մինեզոտայի համալսարանի համագործակցության մեկնարկը և բաղկացած կլինի պլենար նիստից, չորս համընթաց կլոր սեղան - քննարկումներից, որոնց ժամանակ ելույթ կունենան փորձագետներ ԱՄՆ-ից (Մինեզոտայի համալսարան) և Հայաստանից (ՀՊՄՀ):

Աշխատաժողովը անդրադարձ կկատարի հետևյալ հարցերին.

- Մանկավարժական համալսարանների դերը կրթական համակարգերը ներառական դարձնելու գործընթացում,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատումը, անհատական ուսուցման պլաններ,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման մեխանիզմները,
- Լոգոպեդիայի առկա խնդիրները. տեսությունից դեպի պրակտիկա: